Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Շատջրեք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ-ան մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձև1/,

- մեկ լուսանկար 3*4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

- ինքնակենսագրություն /Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 13-ից մինչև փետրվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 2-ին՝ ժամը 13:00-ին,** ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք գյուղի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Շատջրեք, առաջին փողոց, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-87-01-83 հեռախոսահամարով: